

Մայիս 1996

ՀԱՅՔ Հաստատությունը սույն տեղեկագրի միջոցով հրատարակում է իր գիտահետազոտական-ծրագրային աշխատանքների արդյունքներն ու իր տարբեր հանձնախմբերի ուսումնասիրությունների եւ տեսակետների քննարկման եզրակացությունները: Տեղեկագրում տեղ են գտնում նաեւ ՀԱՅՔ Հաստատության հետ գործակցող գիտահետազոտական հաստատությունների ու անհատ մասնագետների աշխատություններ:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՔ Հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատեւման եւ զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու եւ դրա հիման վրա տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունները առաջարկելու մեջ:

ՀԱՅՔ Հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ, համահայկական չափանիշով ու հեռանկարով եւ բացարձակապես զերծ է որեւէ հատվածական շահագրգռվածությունից կամ ազդեցությունից:

ՀԱՅՔ Հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝

ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման եւ դրանց գործնական լուծման համար՝ գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների եւ անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը՝ տարբեր մակարդակներով եւ ձեւերով:

ՀԱՅՔ Հաստատությունը հիմնադրված է, ղեկավարվում է կամ աջակցություն է գտնում հայության ճակատագրով մտահոգ եւ կյանքի այլազան բնագավառներում էական փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից:

ՀԱՅՔ Հաստատությունը որեւէ ձեւով չի կապված, չի ազդված ու առավել եւս չի ղեկավարվում որեւէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպության կողմից:

ՀԱՅՔ Հաստատությունը ազգային շահերին հետեւող, գիտահետազոտական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, լրիվ անկախ ընկերակցություն է:

ԱՌԱՆՑ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ԴԺՎԱՐ Է ԱՌԱՋ ԳՆԱԼ

ՀԱՅՔ հաստատության թիվ 1 ծրագրի առաջին մասով՝ «Հայ Ազգային Հոգեբարոյագիտություն» (որը վերջին հաշվով ուղղակիորեն առնչվում է նաեւ թիվ 1 ծրագրի երկրորդ մասին՝ «Հայ Ազգային Գաղափարախոսություն» եւ թիվ 10 ծրագրին՝ «Հայ Կնոջ տոհմիկ կերպարը եւ ժամանակակից Կոչումն ու Դերը»), տարբեր տեսակետներից հույժ կարեւոր է, որ հայ անհատների, դեպքերի եւ իրադրությունների պատմական տրվյալների հիման վրա մեզ՝ ժամանակակիցներիս ներկայացվի հայ անհատի տոհմիկ կերպարը եւ, դրա հենքին, բնութագրվի ազգային նկարագիրը: Տարբեր դրական կամ բացասական պայմաններում հայ տղամարդու եւ կնոջ անհատական հավաքական կեցվածքի ու վերաբերմունքի պատմական փաստերով բնութագրվի հայության հավատամքը եւ նկարագրվեն նրա դավանած բարոյական արժեքները, պարզաբանվի դրանց հիմքը, գոյացման աղբյուրը եւ էությունը:

Այս աշխատանքը ՀԱՅՔԸ կատարում է հոդվածների, սեմինարների ու այնուհետեւ հատուկ գիտաժողովի միջոցով:

Կարծում ենք շատ կարեւոր է նաեւ, որ արվեստի եւ գրականության տարբեր ձեւերով եւ մոտեցումներով նկարագրվի ազգային դրոշմ ընդունած մարդկային արժեքներով ապրված հայ կյանքը: Կյանքի տարբեր հանգրվաններում այդ արժեքների գործնական կիրառումը եւ դրա արդյունքը:

Մեր պատկերացմամբ այդ նկարագրություններում պետք է հարց տալ եւ պատասխանել, թե մեր այսօրվա չափանիշներով մեր նախնյաց ազգային կերպարը դրական էր թե՛ բացասական: Նույնպես հարցնել նրանց ապրած կյանքի մասին, դրական էր թե՛ բացասական. օգտակար էր իրենց համար, ազգի ու մարդկության համար, թե ոչ: Մենք տարբերվում ենք նրանցից, թե՛ ոչ: Եթե այո, ինչո՞ւմն է տարբերությունը: Պարզապես ժամանակի ոգուց բխող ձեւի մեջ է, թե՛ էությամբ տարբեր: Եվ ի՞նչ է նշանակում դա: Ի՞նչ արդյունք է տալիս այդ տարբերությունը: Եվ կա մի բան, որ մենք պետք է ձգտենք փոխել մեր ըմբռնումների, մեր չափանիշների եւ մեր վերաբերմունքի մեջ՝ անհատապես ու ազգովին: Մեր անհատական, հասարակական, ազգային եւ մարդկային հարաբերություններում էությամբ նմանվելու համար մեր նախնյաց: Եվ այդպիսի փոփոխությունը ինչ նշանակություն կունենա մեր ազգի գոյապահպանման եւ զարգացման, նրա կենսական կարիքների բավարարման, նրա իղձերի կատարման համար:

Ինչպե՞ն պետք է դա արվի:

Այդ անելուց հետո ի՞նչ փոփոխություն տեղի կունենա, ակնկալելի ինչպիսի՞ արդյունքներով:

* * *

Էդիկ Կյուրեղյան
(Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ)

ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ինչպես ռասաները, այնպես էլ ազգերը բանական գոյության այն բնական տարատեսակներն են, որոնք ապահովում են մարդկության, որպես ինքնակառավարվող համակարգի, գոյատևումը: Յուրաքանչյուր ազգ անկրկնելի է եւ, մարդկության ինքնիրացման մեջ՝ անփոխարինելի: Ուստի մենք ելնում ենք այն փաստից, որ, ի թիվս մյուս ազգերի, հայությունը նույնպես սեփական ուրույն նկարագրով եւ քաղաքակրթության պատմության մեջ ունեցած անուրանալի դերով պետք է գոյություն ունենա եւ բարգավաճի հանուն մարդկության գոյության իմաստի:

Ազգային գոյատեւման կարեւորագույն խնդիրներից մեկը հայի պատմական «ինվարիանտ», տոհմիկ այն կերպարի վերականգնումն է, որով այդ նույն հայը կկարողանա ճանաչել սեփական ազգային հավատամքը, բարոյական արժեքները: Այդ արժեքների ճանաչումը (արժեքներ, որոնք՝ ընկալման ու դրսեվորման ազգային յուրահատկություններով հանդերձ, էությամբ համամարդկային են) Հայրենիքում թե այլուր հայ մարդուն թույլ կտա դրանք կիրառել ամենօրյա կյանքում, անձնական, ընտանեկան, ընկերային եւ ազգային հարաբերություններում:

Հայապահպանմանն ուղղված նման ջանքերն ունեն էական մի խնդիր եւս. դրանք թույլ կտան բացահայտել հայ ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մասերը՝ բնորոշելով վերջիններիս ունեցած պատմական դերը: Մի բան, առանց որի հնարավոր չէ գիտակցված կառավարել ազգային գոյությունը, XXI դարի պահանջներին համապատասխան ազգապետություն ստեղծել եւ իրացնել համազգային կենսագործումներ:

Վերոհիշյալ խնդրի իրացման անհրաժեշտ փուլերից մեկը, հեղինակավոր անձանց տեսակետներն ու կարծիքները ընդհանրացնելով, հայի նկարագրի ուսումնասիրմանն ուղղված մոտեցումների ձշգրտումն է: Այդ նպատակով 1994-95 թ.թ. ընթացքում ՀԱՅՔԻ կողմից անց է կացվել «ՀԱՅՈՒԹՅՈՒՆ - 94» փորձագիտական հարցումը: Հարցմանը մասնակցել են տարբեր զբաղմունքների, սեռի, տարիքի ու ծագման շուրջ 100 մտավորական (հարցաթերթիկը տես 14 էջից հետո):

Փորձագետների տվյալ քանակությունը պայմանավորված է որակական ներկայացուցչության եւ վիճակագրական հարմարության պահանջներով: Հարցաթերթիկի բովանդակությունը եւ հարցերի շեշտվածությունը հիմնված են որոշակի համապարփակ ձշմարտությունների վրա: Մասնավորապես, հարցերը ձեւակերպվել են, ելնելով այն գաղափարից, որ.

-Կա գոյության տիեզերական ծրագիր: Մարդկությունը Տիեզերածին է,

-Ազգերը (ռասաները) եւ մշակույթները բանականության ինքնազարգացման բնական դրսեւորումներ են կոնկրետ միջավայրում (մոլորակի վրա): Այդ պատճառով նրանք ունեն գոյությանն ու զարգացմանը ներհատուկ օրենքներ:

-Յուրաքանչյուր ազգի, այդ թվում նաեւ հայության անփոխարինելիությունը քաղաքակրթության գոյության մեջ նրան դարձնում են անոչնչանալի:

-Ազգային հարատեւման ատրիբուտը (անհրաժեշտ ձեւը) պետականությունն է, որը նշանակում է նաեւ տարածք, մշակույթ, գաղափարախոսություն, աշխարհայացք (Ազգային Հավատք):

Կարեւոր է նշել, որ նախնական ինֆորմացիայի բացակայությունը եւ հետազոտության նպատակը հիմնականում պայմանավորել են բաց հարցերի օգտագործումը (խոսքը չնախատեսված պատասխաններով հարցերի մասին է): Մի բան, որը ոչ հեշտ լրացուցիչ աշխատանք է պահանջում տվյալների ընդհանրացման, հասկացությունների նույնատիպացման համար:

Հարցմանը մասնակցել են 70 տղամարդ եւ 30 կին, որոնցից մինչեւ 30 տարեկան են՝ 29, 30-49՝ 33 եւ 50-ից ավելի՝ 38-ը:

Փորձագետներից 85-ը մեծացել են Հայաստանում, իսկ 15-ը՝ դրսում, նախնիներից 67-ինը «դրսից» են, 33-ինը՝ Հայաստանից:

Ազգապահպանման խնդիր քննարկելիս առանձնակարգ հարցերից մեկն այն է, թե հանրային գիտակցության մեջ որչափով եւ ինչպես է ամրագրված սեփական գոյության ինքնահիմնավորումը: Փորձագետներից 63%-ի կարծիքով ազգերը անանց արժեք են՝ մարդկության գոյատեւման նախապայմաններից մեկը: 13%-ը գտնում են, որ ազգերը անցողիկ գոյացություններ են, իսկ 24%-ը դժվարանում են տվյալ հարցին պատասխանել: Այս տվյալները լուրջ մտորումների տեղիք են տալիս, քանզի եթե 5-ից 2-ը կասկածի տակ են առնում գոյության ազգային բովանդակության կարեւորությունը, նման պայմաններում ազգապահպանման խնդիրների լուծումը անհամեմատ դժվարանում է: Եվ սա Հայաստանում, մինչդեռ գոյություն ունի երկու երրորդ սփյուռքահայությունը[1]:

Կոնկրետ ազգերի դերի վերաբերյալ հարցին երկու փորձագետներից մեկը պատասխանեց, որ լավ եւ վատ ազգեր չկան, երեքից մեկն ընդունեց բացառիկ ազգերի գոյությունը, իսկ 17%-ի համար ազգի «կարեւորությունը» կախված է պատմական իրադրությունից: Ըստ որում հայերին բացառիկ ազգ է համարում 55%-ը, բացառիկությունը մերժում է 39%-ը: Այս տվյալների կողքին հուսադրող է հնչում այն, որ 86%-ի կարծիքով առաջիկա հազարամյակում հայ ազգը գոյատեւելու է:

Ամբողջի (մարդկության) մեջ մասի (հայության) բանական ինքնազարգացման տրամաբանությունը հուշում է, որ բոլոր ազգերն ինքնատիպորեն կոչված են արարչագործության, միմյանց չվնասելու եւ հարաճուն ինտեգրացման: Գոյության գուցե այս ինքնահակասականությունն է, որ միաժամանակ թույլ է տալիս նույն մարդու եւ ազգի մեջ համամարդկայնությունը ու

Ակնկալելով սփյուռքահայության պատասխանները՝ տեղեկագրում ներկայացնում ենք հարցաթերթիկը (Ցանկության դեպքում լրացրեք ներդիրը եւ ուղարկեք ՀԱՅՔԻ Վաշինգտոնի գրասենյակի հասցեով): The HAYK institute 4401 FORD AVENUE ALEXANDRIA, VIRGINIA 22302

եսամոլությունը: Այդ պատճառով ազգասիրությունը չի հակասում քաղաքակրթության շահերին: Այն հարցին, թե փորձագետները որչափով են իրենց հայասեր համարում, ոչ հայասեր չհամարեց եւ ոչ մեկը, հայասեր՝ 40%-ը, չափավոր հայասեր՝ 57%-ը, որոշ չափով հայասեր՝ 3%-ը: Բնական է եւ այն, որ 71%-ի կարծիքով հայ ազգը երկրագնդի վրա ունի որոշակի առաքելություն: 14%-ի կարծիքով հայ ազգը նման առաքելություն չունի, իսկ 15%-ը դժվարացան պատասխանել այս հարցին: Ըստ որում, ո՞րն է այդ առաքելությունը հարցին 15%-ը այն կապեցին մշակույթի զարգացման, 13%-ը՝ գիտության, 10%-ը՝ Քրիստոնեական գաղափարների տարածման, 8%-ը՝ արարչագործության հետ: Վերջին հազարամյակը առանձնակի դեր ունի հայ ազգի պատմության մեջ: Այդ ընթացքում մեր ազգը հասցրեց կորցնել իր տարածքների գերակշիռ մասը, պարբերաբար ունեցավ զանգվածային մարդկային կորուստներ, տեղահանումներ: Այս ամենը մի դեպքում փոխեց, վերաձեւավորեց, իսկ մյուս դեպքում ուղղակի ձեւախեղեց ազգի բնավորությունը: Աղյուսակներ 1÷5-ում բերված են փորձագետների պատասխանները մեր կորուստների պատճառների մասին:

Աղյուսակ 1. Հայության կրած տարածքային եւ մարդկային կորուստների պատճառները

№	Պատճառները	%-ը
1	Աշխարհագրական դիրքը	38
2	Մեր ազգային որակները, մասնավորապես.	30
	ա) միաբանության պակասը	13
	բ) անձնական շահերի գերադասումը	11
3	Պետականության կորուստը	21
4	Քրիստոնեական վեհ գաղափարները խոչընդոտեցին մեր ինքնապաշտպանությանը	5
5	Կորցրածը բնական երեւույթ է, ավելին կկորցնեինք, եթե այսքան լավը չլինեինք	4
6	Չեմ կարող ասել	2

Փորձագետներին առաջարկվել էր հակիրճ շարադրել վիճակագրական իմաստով «միջին» հայ մարդու բնավորության գծերը (խառնվածքը) իրենց պատկերացմամբ: Ստորեւ բերված են այդ պատասխանների ընդհանրացումները ըստ հերթականության, բացարձակ թվերով (դրական եւ բացասական գծերի տարանջատված տեսքով):

Դրական			Բացասական		
1	Ընտանիքասեր	32	1	Ամենախեղդը համարող	11
2	Աշխատասեր	26	2	Կոմֆորմիստ (հարմարվող)	10
3	Ազգասեր	19	3	Տաքարյուն	9
4	Հայրենասեր	14	4	Պահպանողական	7
5	Հյուրասեր	12	5	Շահամոլ	7
6	Կիրթ, գրագետ	10	6	Անկիրթ	5
7	Աստվածավախ, մաքրակրոն	9	7	Խորամանկ	5
8	Բարեխիղճ	7			

Հայ ազգի ինքնատիպությունը, պատմության յուրօրինակությունը, «շրջակա միջավայրի» չափից ավելի հակահայկականությունը, արտաքին ճնշումը, հավատափոխելու եւ ձուլելու ձգտումը, պետականության բացակայության կողքին «միջին» հայի նկարագրի մեջ համատեղել են անհամատեղելին: Այսպես օրինակ, անզեն աչքով էլ նկատելի է, որ ասելով «հայ», մոտավորապես կարելի է երեւակայել. մի կողմից՝ ավելորդ դյուրագրգռություն, անկազմակերպություն, հակաօրինական վարքի ինքնաարդարացում, սպառողական նյութապաշտություն, ինքնապահպանման գերագնահատում, սեռաամուսնական խավարամտություն, հակահիրազեկություն, եւ, հավասար չափով նաեւ՝ զուտ հայկական վեհանձնություն, ստեղծագործ ապրելակերպ, անձնազոհություն, անկաշկանդ բնատուր Հավատք (քրիստոնեականություն), մարդկանց միավորելու, հաշտեցնելու ձգտում, կանացի հեզություն եւ առաքինություն, տղամարդկային անսահման արժանապատվություն ու մեծահոգություն, ամուսնական անբռնազբոս հավատարմություն եւ ազատամտություն, գերխնդիրների զանգվածային

գիտակցում:

Հարցման կարեւոր պահերից մեկը վերոհիշյալի փորձագիտական գնահատականն էր: Նախ մեզ հետաքրքրել է, թե ինչ ընդհանրական կարծիք կա հայի կայուն, տոհմիկ ազգային կերպարի վերաբերյալ: Նման կերպարի գոյությունը հավաստել են 69%-ը, մերժել՝ 18%-ը: Հայի տոհմիկ ազգային կերպարի որակները ըստ հերթականության դասավորվել են հետեւյալ կերպ.

1.Ընտանիքասիրություն
2.Հայկական ավանդույթների պահպանում
3.Հայրենասիրություն
4.Աշխատասիրություն
5.Ամուր բարեկամական կապեր
6.Այլասիրություն
7.Դիմացկունություն (ըմբոստություն)
8.Կրոնական արժեքներին հավատարմություն
9.Քաջություն
10.Հարգանք ծնողի (մեծի) նկատմամբ:

Փորձագետների կարծիքով, հայի տոհմիկ ազգային կերպարն է, որ հային հայ է պահում, նրան վեհացնում եւ օգնում է ինքնահաստատվելու (18,0 %): Այն կայուն ընտանիքի, ազգային-ընտանեկան ավանդույթների պահպանման եւ երեխաների անձնավորության ճիշտ ձեւավորման երաշխիք է (35,0 %), գոյության եւ ազգային նկարագրի պահպանման, ազգի միավորման եւ զարգացման առհավատչյան (27,0 %): Տոհմիկ կերպարը ի վերջո օժանդակում է քաղաքակրթության զարգացմանը, լիարժեք ու բազմատաղանդ անձնավորությունների ձեւավորմանը, օրինակ է մյուս ազգերի համար (19,0 %):

Այս հարցի պատասխանների մեջ՝ կապված խնդրո առարկայի հետ նշանակալիցն այն է, որ միջին հաշվով երեք փորձագետից մեկը (հիշենք որ նրանք մտավորականներ են) դժվարացավ նկարագրել հայի տոհմիկ կերպարի նշանակութ-

յունը անհատի, ընտանիքի, ազգի եւ մարդկության համար:

Հիմնահարցի առաջնակարգ բլոկներից մեկը հայության վրա դարավոր իրավազուրկ եւ պետականազուրկ վիճակների ազդեցության բացահայտումն է: Այն, ըստ ստացված տվյալների, հոգեբանորեն մի կողմից հային դարձրել է հպատակվող, կամովին ենթարկվող (10,0 %), ուրիշի օգնությանը սպասող, թերահավատ ձնշված ու երկչոտ (8,0 %), մյուս կողմից՝ ըմբոստ, համբերող եւ դիմակայող (7,0 %): Բարոյապես տվյալ վիճակը ձեւավորել է ընտանիքապաշտ ու աշխատասեր (11,0%) եւ, միաժամանակ, անձնապաշտ ու նյութապաշտ հային: Մտածելակերպով հայը ստիպված դարձել է ավելի խելացի, հնարամիտ, ազգային արժեքները գնահատող (12,0%) եւ, միաժամանակ, միջոցների առջեւ խտրություն չդնող, ոչ պետական մտածողությամբ, սահմանափակ («գավառայնություն») (6,0%):

Պետականազուրկ վիճակի, նրա գոյության էպիզոդիկ բնույթի ազդեցությունը ազգային կյանքի տարբեր բնագավառների վրա ենթակարգվել է հետեւյալ կերպ.

1.Մտրկամտության, ուրիշի վրա հույսը դնելու (17,0%)
2.Պետական խնդիրների ընկալման բացակայության (17,0%)
3.Յուրաքանչյուրն իր համար ամենակարող է (15,0%)
4.Ազնվականության բացակայությանը (13,0%)
5.Օտարազգիների սովորությունների ընդունմանը (12,0 %)

Ձեռք բերված հատկությունները բաշխվեցին հետեւյալ կերպ (տես աղյուսակ 2)

Աղյուսակ 2. Պետականազուրկ պայմաններում ձեռք բերած «+» եւ «-» հատկությունները (բացարձակ թվերով)

№	«+» հատկություններ	թիվը	№	«—» հատկություններ	թիվը
1	2	3	4	5	6
1	Աշխատասիրություն	22	1	Արտագաղթի հոգեբանություն	24
2	ընտանիքի պատիվը պահող	17	2	ստորաքարշություն	22
3	խելացիություն	15	3	անկարգապահություն	21
4	դիմացկունություն	14	4	շահամոլություն	21
5	հյուրասիրություն	13	5	հոգեբանական կախվածություն	20
6	ազգասիրություն	10	6	ոչ պետական մտածողություն	20
7	համբերատարություն	9	7	անհավատություն	19
8	հզոր Հավատք	8	8	ստախոսություն	18
9	ուսման ձգտում	8	9	չափից ավելի ինքնավստահություն	17
10	ոչնչից ինչ-որ բան ստեղծելու կարողություն	8	10	վախկոտություն	12

Հայապահպանության կարեւոր սոցիոլոգիական խնդիրներից մեկը բացասական հատկանիշների վերացման ուղիների բացահայտումն է: Այս հարցին տրված պատասխանների տեքստային վերլուծությունից բխում է, որ ամենակարճ ուղիներից մեկը Ուժեղ Ազգային Հավատքն է (33,0%), մյուսը՝ ազգային ուժեղ պետության ստեղծումը (31,0%) եւ ազգային հստակ գաղափարախոսությունը (22,0%): Մյուս հնարավորությունները կապված են «աշխատող» օրենքների առկայության (10,0%), դաստիարակության արդյունավետ մեխանիզմի (6,0%) եւ մշակույթի (5,0%) հետ: 5,0 %-ի կարծիքով, այդ բացասական հատկությունները «պատմությունը կվերափոխեն»:

Նկատի ունենալով ազգային գաղափարախոսության կարեւորությունը՝ մեզ հետաքրքրել էր փորձագետների կարծիքը գաղափարախոսության առկայության եւ նրա բովանդակության վերաբերյալ: 46,0% գտնում է, որ հայ ազգային գաղափարախոսություն մենք ունեցել ենք եւ այժմ էլ ունենք, 28,0%-ը համարում է, որ ունեցել ենք, սակայն հիմա չունենք, 11,0%-ի համար՝ չենք ունեցել եւ չունենք, իսկ մնացածը չկարողացան պատասխանել (15,0%):

Ազգապահպանության խնդիրների լուծման օպտիմալ տարբերակների մշակման, հասարակական կյանքի կառավարման մեջ այն ավելի արդյունավետ ներդնելու տեսանկյունից կարեւոր է

փորձագետների ըմբռնումը հայ ազգային գաղափարախոսության հիմնական տարրերի, նրանց բովանդակության վերաբերյալ: Այն ունի ենթակարգված հետեւյալ տեսքը.

1. Քրիստոնեական արժեքների վերածնում եւ կարեւորում - 25,0%
2. Ազգի միասնության կարեւորագույն հիմնահարցը - 22,0%
3. Ուժեղ պետականություն - 20,0%
4. Հավատարմություն Հայ Դատին - 20,0%
5. Կրթական համակարգի գերակայություն - 14,0%
6. Ազգի սոցիալական պաշտպանվածություն - 13,0%
7. Ազգային արժեքների գերակայություն - 12,0%
8. Տարածքային անձեռնմխելիություն - 10,0%
9. Ուժեղ տնտեսություն - 10,0%
10. «Ազգակենտրոն համամարդկայնություն» - 10,0%

Եթե, հիմնվելով ընդունած համապարփակ ճշմարտությունների եւ հարցման տվյալների վրա, ընդհանրացնենք ասվածը, կարելի է պնդել, որ հայապահպանությունը պահանջում է.

1. Հայ քրիստոնյայի նկարագրի վերաիմաստավորում եւ տարածում իրազեկման զանգվածային տարբեր միջոցներով, մշակույթի եւ արվեստի տարբեր միջոցներով:
2. Հայկականության, նրա պահպանման համար ազգի միասնականության, սրա անձնական նշանակության հիմնավորում եւ տարածում:
3. Պետական մտածողության էության, բովանդակության գիտակցման կարեւորության հիմնավորում եւ տարածում:
4. Անկախ բնակության վայրից հայի համար կրթության գերակայության ապահովում:

* * *

Կորյուն Սարինգուլյան (փիլ. գիտ. թեկնածու)

ԽՈՀԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱԿԵՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ցանկացած էթնիկ համրույթի անդամների գիտակցության մեջ առկա են որոշակի ստերեոտիպային պատկերացումներ այն մասին, թե բնավորության, վարքի, մտավոր եւ բարոյական կեցվածքի ինչպիսի գծեր են բնորոշ նրանց հանրային, ազգային Ես-ին: Այդ ստերեոտիպերը կատարում են գերազանցապես հոգեբանական պաշտպանության եւ թերապիայի գործառույթներ եւ կառուցվում են ազգային կյանքի որոշ իրական փաստերի չափազանցման կամ առասպելականացման միջոցով: Ազգային ինքնության ռեալիստական ըմբռնման խնդրի տեսանկյունից այդ ստերեոտիպային ինքնագնահատականները խմացական խոչընդոտներ են, սակայն դրանք կարող են եւ պետք է ուսումնասիրվեն նաեւ որպես փնտրվող ազգային Ես-ի ուրույն դրսեւորումներ: Այդ Ես-ի կառուցվածքում մտակեցվածքը հանդես է գալիս իբրեւ ազգային բնավորություն եւ ընդհանրապես ազգի հոգեկերտվածքի յուրահատուկ հատկանիշների գաղափարական հիմք: Շնորհիվ լեզվի մեջ եւ մշակույթում իր առարկայացմանը, մտակեցվածքը կարող է փաստագրվել եւ ուսումնասիրվել գիտության միջոցներով: Տարբեր լեզուներում միեւնույն հասկացությունն արտահայտող բառերի իմաստային դաշտերի համեմատությունը համապատասխան ազգային մտակեցվածքների, այդ թվում նաեւ հայ ժողովրդի մտակեցվածքի, գիտական վերծանման խոստումնալից մեթոդներից մեկն է:

1. Ազգային Ես-ի ինքնապատկերները

Ո՞ր է մեր՝ հայերիս, ուրույն ազգային դիմանկարը: Ինչպիսի՞ն ենք մենք: Ի՞նչ հակումներ եւ կարողություններ են բնորոշ մեր հավաքական ազգային Ես-ին: Վերջինիս հատուկ ո՞ր գծերն են օժանդակել եւ որո՞նք են խոչընդոտել մեր պատմական

գոյատեւմանը: Հոգեկան եւ հոգեւոր ինչ պաշարներ ունի եւ կարող է գործադրել հայ ժողովուրդը արդի մարդկության անհամերաշխ ընտանիքում հնարավորին չափ հաստատուն եւ արժանավայել դիրք նվաճելու համար: Ահա մոտավորապես այն հարցերը, որոնց պատասխանների շրջանակում հնարավոր է կառուցել հայ ազգային ինքնության՝ գործնական որոշակի հետեւություններով հղի ընդհանրական դիմապատկերը:

Սեփական կյանքը ինքնուրույն եւ ինքնիշխան կերպով տնօրինելը, կենսականորեն կարեւոր հարցերում ինքնուրույն վճիռներ ընդունելը դա ազատության եւ պատասխանատվության այն ծանր, բայց բաղձալի բեռն է, առանց որի չկա հասունացում ո՛չ մարդ-անհատի, ո՛չ ազգի համար: Եվ այս երկուսի համար էլ հասունացումը ենթադրում է ինքնագիտակցության որակապես մի նոր մակարդակ, պահանջում է սեփական Ես-ի կամ, ինչպես ընդունված է ասել, «ինքնության» հստակ ռեալիստական պատկերի ձեւավորում:

Այս խնդրի իրականացման ճանապարհին հառնում են ինչպես իմացական, այնպես էլ հոգեբանական բնույթի դժվարություններ եւ խոչընդոտներ: Չէ՞ որ այդ Ես-պատկերը, եթե այն իրոք ռեալիստական է, չի կարող չարձանագրել արժանիքների հետ մեկտեղ նաեւ բնօրինակի անխուսափելի արատները: Այն ոչ միայն չի կարող, այլեւ չպետք է լինի զուտ հաճոյախոսական: Հակառակ պարագայում արատավոր գծերից զերծ, սթափ ինքնաքննադատական հայացքից խուսափող նման Ես-պատկերը կապակողմնորոշի իր բնօրինակ-սուբյեկտին, նրա գիտակցությունը կսուզի սնապարծ ինքնագոհության նիրհի մեջ, դրանով իսկ անօգնական դարձնելով նրան իրական աշխարհի մարտահրավերներին հանդիման:

Արդարությունը պահանջում է ասել, որ որոշակի սոցիալ-պատմական պարագաներում արժանիքները ուռճացնող եւ թերությունները սքողող ազգային ինքնապատկերը կարող է կատարել եւ հաճախ իսկապես կատարել է դրական, օգտակար

դեր: Ազգային Ես-ի նվաստացման պայմաններում, անբարենպաստ քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային հանգամանքներում նման միակողմանի-հաճոյախոսական ինքնապատկերը դառնում է յուրովի հոգեբանական պաշտպանության միջոց՝ վերականգնելով ազգի գիտակցության մեջ սեփական լիարժեքության խափանված ինքնազգացումը ու դրանով իսկ նոր լիցք հաղորդելով նրա կենսահաստատիչ գործունեությանը:

Հատուկ ապացույցների կարիք չունի այն միտքը, որ հայ ժողովուրդը իր պատմության գրեթե ողջ տեսանելի տարածքում բազում հիմքեր է ունեցել, ի թիվս այլ ինքնապաշտպանական միջոցների, գործադրելու նաեւ հոգեբանական պաշտպանության նշված միջոցը՝ դիմահարդարված ազգային ինքնապատկերը: Հոգեբանական հատուցման այդ մեխանիզմը առավելագույն ուժգնությամբ է բանեցվել մեր դարում՝ ի պատասխան այն հսկայական մարդկային եւ տարածքային կորուստների, որ կրեց մեր ազգը 1915-1923 թվերի ողբերգական իրադարձությունների հետեւանքով:

Չէ՞ որ դրանք կորուստներ էին ոչ միայն ֆիզիկական եւ նյութական, այլեւ բարոյական-հոգեբանական բնույթի, կորուստներ՝ ազգային արժանապատվության նսեմացման առումով:

Պատմական ճակատագրի կործանիչ հարվածներից ծնված ալիքները գալիս, հասնում են մինչեւ մեր օրերը, ալեկոծելով մեր ազգային կեցության ավազանը արտաքին գոյաշերտերից մինչեւ ամենախորունկ հոգեղեն գոյաշերտերը: Հենց այս վերջինների յուրահատուկ հատուցմանն է ծառայում ազգային Ես-ը հնարավորին չափ շահեկան գծերով ներկայացնելու հասկանալի ձգտումը: Այդ ձգտումը ազգի զանգվածային գիտակցության մեջ տարբեր (երբեմն նաեւ առեղծվածային թվացող) ուղիներով է իրագործվում:

Ազգային դրական ինքնապատկերի կառուցման ամենապարզ եւ ամենաբնական եղանակը թերեւս ազգի պատմության այն իրական անցքերի կամ ազգային մշակույթի այն իրական

Դժվար չէ կռահել, որ այս եւ նմանօրինակ այլ առասպելները ազգային լիարժեքության խաթարված ինքնազգացումը հատուցելու, վերականգնելու միջոցներ են: Ճիշտ այնպես, ինչպես դրա միջոց է նաեւ ազգի իրական պատմամշակութային նվաճումների ուռճացված պատկերումը ու շահարկումը, ի շահ սեփական ազգային դիմապատկերի՝ այլ ազգերի կանխակալ բացասական ընկալումն ու գնահատումը եւ այլն:

Ամփոփելով վերը ասվածը՝ արձանագրենք այն իրողությունը, որ ազգի գիտակցության մեջ հաճոյախոսական ինքնապատկերի գերիշխանությունը կարելի է անվարան կերպով համարել նրա ընկճված կեցության եւ դրանից բխող հոգեբանական թերարժեքության ախտանիշ: Միեւնույն ժամանակ դա ոչ միայն ախտաբանական հուսալի ցուցանիշ է, այլեւ բուն ախտի պատճառած ցավն ամոքելու, ցավազրկելու միջոց: Հաճոյախոսական ինքնապատկերի օգտակարությունն ազգային օրգանիզմի համար համանման է, այսպիսով, ցանկացած թմրադեղի օգտակարությանը. այն չի վերացնում բուն ախտն, այլ միայն օգնում է համակերպվել նրա հետ, թեթեւացնել նրա հարուցած տառապանքները:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ ազգային գիտակցության մեջ հաճոյախոսական ինքնապատկերները համատեղվում են իրենց հակոտնյաների՝ բացասական ինքնագնահատումների հետ: Ի դեպ այս երկու տիպի Ես-կերպարների միջեւ յուրօրինակ «աշխատանքի բաժանում» է նկատվում: Եթե առաջինները գերազանցապես կիրառվում են այլազգիների հետ փոխհարաբերություններում, ապա երկրորդները, որպես կանոն, շրջանառության մեջ են դրվում ազգի ներսում: Այդպիսի «ներքին օգտագործման համար» նախատեսված բացասական ստերեոտիպների թվին են պատկանում հայոց միջավայրում զանգվածային տարածում ունեցող այն համոզմունքները, որ հայերն անհուսալի գործընկերներ են, հակված են խաբեբայության, ընդունակ չեն արդյունավետորեն համագործակցել հանուն որեւիցե հանրային շահի, անհատապաշտ են, միտված են դավաճանության, հավակնոտ են իրենց վարքում, չունեն պատկառանք օրենքի եւ սահմանված կարգուկանոնի նկատմամբ, հեղինակություններ չեն ճանաչում իրենց ազգակիցների շրջանում եւ այլն, եւ այլն:

Որքան էլ դա զավեշտական թվա, բացասական ազգային ինքնապատկերները նույնական են հաճոյախոսականների հետ ըստ իրենց կատարած հոգեբանական հատուցման գործառույթի: Ինքնապարսավանքը, ինչպես եւ ինքնագովերգումը, ազգի ռեալ-կենսական եւ հոգեկան անբարվոքության ցուցանիշներ են եւ այդ անբարվոքության հետ կապված՝ խախտված ներքին հավասարակշռությունը վերականգնելու (հատուցելու) հոգեբանական միջոցներ: Բացասական ինքնագնահատականները նման հատուցման մազոխիստական մի տարբերակն են: Այս դեպքում, ազգային Ես-ը մռայլ գույներով ներկայացնելիս, անհատները դրանով իսկ կարծես ազատում են իրենց եղած սոցիալական եւ բարոյական արատավոր երեւույթների դեմ պայքարելու պարտականությունից, արդարացնում այդ երեւույթների վերարտադրության մեջ իրենց պասիվ կամ ակտիվ մասնակցության հանգամանքը: Սոցիալական չարիքների գոյության մեղքն ու պատասխանատվությունը բարդվում է ազգի ուսերին, իսկ բեռը թոթափած անհատներն ապահովում են իրենց սեփական ներքնաշխարհի անվրդովությունը: Այստեղ գործում է անհատական Ես-ը ազգային Ես-ից տարանջատելու ենթագիտակցական միտումը: Ճիշտ հակառակը, սեփական ազգի հաճոյախոսական դիմապատկերման դեպքում անհատները ենթագիտակցաբար հակված են նույնացնելու իրենց անհատական Ես-ը ազգային Ես-ի հետ, ասես փոխադրելով իրենց անձի վրա ազգի իրական կամ առասպելական արժանիքներն ու նվաճումները: Դժվար չէ կռահել, որ մտքի այս երկու հակադիր միտումները միասնական են իրենց հատուցողական հոգեբանական գործառույթով:

Սույն ակնարկի սկզբում հայ ազգային ինքնության իրատե-

սական պատկեր ստեղծելու անհրաժեշտության մասին խոսելիս մենք բնավ նկատի չունեինք ազգային գիտակցությունից ոչ իրատեսական, հատուցողական նպատակառաղղվածություն ունեցող (այս կամ այն առումով խեղված) ինքնապատկերներն իսպառ արմատախիլ անելու խնդիրը: Նման խնդիրը ոչ միայն բացարձակապես անիրագործելի է, այլեւ, անգամ իրագործելի լինելու դեպքում, հղի է բազում վնասակար հետեւանքներով: Խոսքը լոկ այն մասին է, որ ազգային գիտակցության առօրեական մակարդակում գործառնող ինքնապատկերները անկախ դրանց արժեքային բովանդակությունից եւ գոյացման եղանակներից, ըստ երեւույթին, չեն կարող բավարարել հայ ժողովրդի արդի կեցության պահանջմունքները:

Վերագտնված ազգային պետականության պայմաններում, երբ մեր ժողովրդի առջեւ ծառացած են բազում կառուցողական խնդիրներ, ազգի Ես-պատկերը պետք է ծառայի արդեն ոչ թե սոսկ ոգեշնչման եւ ցավազրկման, այլ ազգի իրական ներուժը իմաստավորելու եւ այն առավելագույն չափով ու խելամտորեն օգտագործելու նպատակներին: Այսպիսով, խոսքը գնում է հայ ազգային ինքնության այնպիսի պատկերի ստեղծման մասին, որը իրական լինելով, կոչված է նպաստելու հայ ժողովրդի կենսագործունեության համալիր ռազմավարական ծրագրի մշակմանը եւ իրացմանը: Իսկ այդպիսի ծրագիրը անկասկած չի կարող լիարժեք համարվել, եթե այն կառուցվում է առանց ազգային յուրահատուկ դիմանկարի:

Ազգային Ես-պատկերին ներկայացվող որակապես նոր պահանջները չեն կարող իրենց բավարարումը ստանալ առօրեական գիտակցության շրջանակներում: Հայ ինքնության պարզաբանման խնդիրը անհրաժեշտ է տեղափոխել տեսական գիտակցության բնագավառ, դարձնել այն ճշմարտության չափանիշներով ղեկավարվող գիտական մտածողության առարկա:

Հարցի քննարկումը գիտության դիտահարթակի վրա փոխադրելու համար նախ եւ առաջ պետք է թոթափել առօրեական

գիտակցության մեջ արմատավորված ազգային ինքնապատկերումների կպչուն բեռը, ընդունել օբյեկտիվ եւ անկանխակալ դիրքորոշմանը հավատարիմ մնալու երդումը: Այս առաջին քայլի կատարումը նշանավորում է հարցի գիտական լուսաբանման ճանապարհին հառնող հոգեբանական պատնեշների եթե ոչ արմատական վերացում, ապա գոնե դրանց հաղթահարման վճռորոշ երաշխիքի ստեղծում: Ցավոք, այդ պատնեշները միակը չեն... Ազգային ինքնության հետազոտողին առջեւում սպասվում են արդեն այլ՝ իմացաբանական բնույթի դժվարություններ ու խոչընդոտներ, որոնք պայմանավորված են ուսումնասիրության բուն առարկայի խրթինությամբ, գիտության ավանդական-դասական մեթոդների եւ մոտեցումների ցանցով այն «որսալու» անհնարինությամբ:

Թողնելով այդ իմացաբանական պատնեշների առարկայական քննարկումը ապագային՝ բերենք ազգային ինքնության գիտական վերծանման հետ կապված դժվարությունները լուսաբանող միայն մի պերճախոս վկայություն:

«Ազգային ինքնությունը» որպես բացարձակ էություն, - գրում է պրոֆ. Լեւոն Աբրահամյանը, - իմացաբանորեն «իդեալական օբյեկտ է»: ... Սակայն որքան էլ անվերապահ լինի այդ բացարձակը, այն... էականորեն տարբեր մեկնաբանությունների հնարավորություն է տալիս: Որպես էմպիրիկորեն տրված իրողություն ազգային ինքնությունը հանդես չի գալիս «ինքնին ազգի» սառած նույնության կաղապարով: Ժամանակի ոչ մի պահի այն լրիվ եւ անվերապահ չէ: Այն մեկ ավելի կայուն է, մեկ՝ բոլորովին անկայուն: Մի խոսքով, այն ընթացք է: Նրանում միշտ կա ինչ-որ պահպանվող եւ ինչ-որ փոփոխվող բան: Բայց մեկի եւ մյուսի զուգակցումը իր հերթին նույնպես փոփոխական է, անհավասարակշիռ: Ազգը, ինչպես եւ անհատը, երբեմն, ոգեշնչման բոպեներին, կարծես ինքն իրենից առաջ է ընկնում: Սակայն ավելի հաճախ նա ետ է մնում ինքն իրենից եւ, եթե այդ ժամանակ դժվարությամբ է ինքն իրեն ճանաչում, ապա դա

նույնպես ինքն է»[1]:

Համամիտ լինելով պրոֆ. Աբրահամյանի կարծիքին այն մասին, որ ազգային ինքնությունը հոսուն եւ մեկընդմիշտ տրված սահմանագծեր չունեցող բարդ գոյացություն է, համարում ենք, որ գիտական մտածողության մեջ այն ներառնելու համար հետազոտական ուշադրությունը պետք է սեւեռել նախ եւ առաջ նրա հարաբերականորեն հաստատուն, անփոփոխ, վերարտադրվող միջուկի վրա:

Միայն այդ միջուկի տեսական առանձնացումից եւ ուսումնասիրությունից հետո է, որ կարելի է փորձել ինչ-որ օրինաչափություններ գտնել նաեւ ազգային ինքնության այլադաս տարրերի շարժուն խճանկարում: Մեր կարծիքով, ազգային ինքնության հենց այդպիսի միջուկ է հանդիսանում ազգային մտակեցվածքը:

2. Ազգային մտակեցվածքը եւ նրա գիտական վերծանման ուղիները

Ազգային հանրույթի մեջ անհատներին միավորող ընդհանրական հատկանիշների թվում սովորաբար միշտ նշվում է նրանց հոգեկան կերտվածքի (կամ բնավորության) ընդհանրությունը [2]: Վերջինս սակայն շարունակում է մնալ առավել անորոշը եւ անորսալին ազգի այլ բնութագրիչների շարքում, եւ նրա գոյությունն առ այսօր հավաստվում է ավելի շուտ ներըմբռնման թելադրանքով, քան ճշգրիտ փաստերով [3]:

---

1. Աբրահամյան Լեւոն – Ազգային ինքնությունը որպես պրոցես: «Ինքնություն», Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի պարբերական հրատարակություն, պրակ 1: Երեւան, 1995, էջ 21

2. Бромлей Ю.В. Очерки теории этноса. М., 1983, с. 143-172.

3. Кон И.С. К проблеме национального характера. /История и психология. М., 1971; Козлов В.И., Шелепов Г.В. "Национальный характер" и проблемы его исследования./ Сов. этнография, 1973, №2.

Այս իրադրությունից դուրս գալու ուղիներից մեկը, որն արդեն իսկ հստակորեն նշմարվում է համաշխարհային գիտական գրականության մեջ, դա ազգային հոգեկանի ամբողջությունից նրա մտավոր շերտի (մտակեցվածքի) առանձնացումն ու հետազոտումն է: Ի տարբերություն հոգեկան կերտվածքի կամային եւ հուզական շերտերի, որոնք գերազանցապես դրսեւորվում են տվյալ ազգային հանրույթը կազմող անհատների կենդանի վարքում, այդ կերտվածքի մտավոր շերտը իր ամրագրումն է ստանում ոչ միայն վարքային ռեակցիաների եռուն տարերքում, այլեւ այդ տարերքից փոքրիշատե անջատված, եզակիության եւ պատահականության շղարշից ազատված մշակութային իրողություններում: Վերջիններս, շնորհիվ իրենց կայուն առարկայացված գոյության (պատմական հուշարձաններ, գրավոր տեքստեր, արվեստի ստեղծագործություններ եւ այլն), ակներեւաբար ավելի մատչելի են գիտական ուսումնասիրության համար, քան վարքային ռեակցիաների տարաբնույթ եւ փոփոխական բազմությունը: Բացի առարկայացման բարենպաստ հանգամանքից, ազգային հոգեկանի մտավոր շերտը ավելի հասանելի է գիտության համար նաեւ այն պատճառով, որ մարդկանց մտածողությունն ուսումնասիրելն ավելի հեշտ է, քան նրանց կամքի եւ հույզերի դրսեւորումները (այստեղ նույնպես գործում է «նմանը նմանի միջոցով» հանրահայտ սկզբունքը):

Բերված նկատառումների արդարացիության կողմնակի ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ արդի պատմագիտական միտքը, անդրադառնալով եվրոպական ժողովուրդների միջնադարյան պատմության հոգետր գործոնների լուսաբանմանը, հանրային հոգեկանի բաղադրատարրերի շարքում առանձնացնում եւ հատուկ վերլուծության առարկա է դարձնում հենց «մտակեցվածք» երեւույթը: Վերջինիս տակ հասկացվում են ոչ թե «փոփոխական», «կոնյունկտուրային» տրամադրություններն ու հոգեբանական վիճակները, որոնք առաջանում են այս կամ այն պահերին որոշակի հանգամանքներում, այլ գիտակցությանը

ներհատուկ՝ մշակույթով եւ ընկերային համակարգով պայմանավորված ավելի կայուն, խորքային դիրքորոշումներն ու սովորությունները»[4]:

Ազգային մտակեցվածքը կարելի է սահմանել որպես տվյալ ազգային հանրույթի անդամներին բնորոշ, նրանց հոգեկանի մեջ մշակութային միջոցներով ներմուծվող ու վերարտադրվող ընդհանրական գաղափարական դիրքորոշումների մի համալիր, որը կազմում է նրանց աշխարհընկալման եւ աշխարհըմբռնման յուրահատուկ եղանակի միասնական հիմքը: Այլ կերպ ասած, դա իրականության ամենատարբեր երեւույթների վերաբերյալ ազգի ունեցած հիմնարար կոլեկտիվ պատկերացումների ամբողջությունն է, կամ, հայտնի փիլիսոփա եւ մշակութաբան Գեորգի Գաչեւի արտահայտությամբ, «աշխարհի ազգային պատկերը»: Ձեւակերպելով վերջինիս իմաստավորման խնդիրը՝ նա գրում է. «Մեզ հետաքրքրում է ոչ թե ազգային բնավորությունը, այլ աշխարհի ազգային հայեցումը, ոչ թե հոգեբանությունը, այլ, այսպես ասած, իմացաբանությունը՝ մտածողության ազգային ... «տրամաբանությունը», կերտվածքը, այն, թե ինչպիսի՞ «կոորդինատային ցանցով» է տվյալ ժողովուրդը ընկալում աշխարհը եւ, համապատասխանաբար, ինչպիսի՞ տիեզերք է («Կոսմոս» բառի հնագույն՝ «աշխարհակարգ» իմաստով) կառուցվում նրա աչքերի առջեւ»[5]:

«Բնավորություն» հասկացությունը, անկախ այն բանից, թե ո՞ւմ է այն վերագրվում՝ անհատին, ազգին կամ այլ մի մարդկային հանրույթի, կոչված է արտահայտել սրանց վարքի հաստատուն միտումների ամբողջությունը: «Հոգեկան կերտվածք» հասկացության կոչումը՝ այս վարքային համալիրն ապահովող հոգեբանական բազմաբնույթ (կամային, հուզական,

4. *"Идеология феодального общества в Западной Европе: проблемы культуры и социально-культурных представлений средневековья в современной зарубежной историографии". Реф. сб. М., 1980, с. 9.*

5. *Гачев Георгий. Национальные образы мира. М., 1988, с. 44.*

մտավոր-իմացական) տարրերի համակարգը նշանակելն է: Ինչ վերաբերում է «մտակեցվածք» հասկացությանը, ապա վերոհիշյալը նկատի ունենալով, այն կարելի է բնութագրել որպես թե՛ բնավորության, թե՛ հոգեկան կերտվածքի մտավոր-իմացական հիմք: Այսպիսով, ազգային մտակեցվածքի ուսումնասիրությունը կարող է բանալիներ մատուցել ավելի ծավալուն հոգեբանական գոյացությունների՝ ազգային բնավորության եւ ազգի հոգեկան կերտվածքի էության մեջ ներթափանցելու համար:

Որոշակի առումով մտակեցվածքը կարող է դիտվել որպես հոգեկանի մի մաս, եւ դրանով իսկ «մասի իմացությունից դեպի ամբողջի իմացություն» բանաձեւը լիովին կիրառելի է տվյալ դեպքում: Ազգի հոգեկերտվածքի ճանաչման խնդրի տեսանկյունից ազգային մտակեցվածքը, սակայն, արժեք է ներկայացնում ոչ թե որպես այդ ամբողջի մի պարզ, նրա այլ «մասերին» հավասարազոր մի «մաս», այլ այնպիսի մաս, որը պատասխանատու է ամբողջի որակական ինքնության գոյացման համար եւ որոշակի ձեւ ու ուղղություն է հաղորդում նրա մնացած բաղադրատարրերին:

Ասվածը լիովին բացատրվում է մարդկային հոգեկանում բանականության վճռորոշ դերի հիմնարար փաստով, այն հանգամանքով, որ մարդկանց մոտ կամքը եւ հույզերը միշտ հանդես են գալիս ոչ թե ինքնաբուխ եւ անմիջական տեսքով, ինչպես դա կենդանիների մոտ է, այլ այսպես թե այնպես անցնում են բանականության «մտավոր սարքի» միջով եւ իրենց վրա կրում վերջինիս իմացական կաղապարների կնիքը: Այստեղից պարզ է, որ առանց ազգային մտակեցվածքը կազմող իմացական կաղապարների բացահայտման անհնար է հասկանալ ազգի բնավորության եւ հոգեկերտվածքի առանձնահատկություններն ընդհանրապես:

Ազգային մտակեցվածքը իր առարկայական մարմնավորումն է գտնում ազգային մշակույթի ողջ բազմատարր ու խայտաբղետ զանգվածում: Այս իմաստով մշակութային բոլոր կարգի իրո-

ղությունները՝ որոշակի հետազոտական ոսպնյակով դիտելու պարագայում կարող են նյութ հանդիսանալ դրանցում ծածկագրված տիպական խմբային մտավոր պատկերացումների եւ գաղափարական դիրքորոշումների բացահայտման համար: Այս խնդիրը սակայն խրթինության տարբեր աստիճան ունի մշակութային փաստերի տարբեր տեսակների նկատմամբ, քանի որ դրանցում մտակեցվածքը կարող է դրսեւորել եւ դրսեւորում է իրեն ավելի կամ պակաս հստակությամբ, ավելի կամ պակաս անմիջականորեն:

Ազգային լեզվի (եւ ավելի լայն՝ լեզվական իրականության) հետ առնչվող փաստերը առաջադրված խնդրի տեսանկյունից անկասկած արժանի են նախապատվության մշակութային այլատեսակ փաստերի համեմատությամբ: Ազգային լեզուն իր բառապաշարով, քերականական կառուցվածքով եւ բազմապիսի գործածությունների զանգվածով հանդերձ ազգային ոգու ամենաօրինավոր ու ակնառու կացարանն է կամ, Մարքսի արտահայտությամբ, նրա «անմիջական իրականությունը»:

Գերմանացի մեծ փիլիսոփա եւ լեզվաբան Վիլհելմ Ֆոն Հումբոլդտին ենք մենք պարտական այն պարզ, եւ իր պարզության մեջ հանճարեղ, ճշմարտության հայտնագործման համար, ըստ որի լեզուների միջեւ եղած տարբերությունները ոչ թե միեւնույն մտավոր բովանդակության արտահայտման ձեւի, այլ բուն այդ բովանդակության (այսինքն մտածելակերպերի) մեջ առկա տարբերություններ են: «Տարբեր լեզուները, - գրել է նա, - դրանք ոչ թե միեւնույն բանի տարբեր նշանակումներ են, այլ նրա տարբեր ընկալումները...»: Իսկ ահա այդ իմաստալից մտքի շարունակությունը. «... Լեզուների բազմազանության միջոցով մեր առջեւ է բացվում աշխարհի եւ աշխարհում մեր կողմից ճանաչվողի բազմազանությունը. եւ մարդկային կեցությունը ավելի ընդարձակ է դառնում մեզ համար, քանի որ լեզուները հստակ եւ իրական գծերով ներկայացնում են մեզ մտածողության եւ ընկալման տարբեր եղանակներ: Լեզուն միշտ իր մեջ

մի ողջ ժողովրդի յուրահատկություն է մարմնավորում...» [6]:

Ազգային բնավորության եւ հոգեկերտվածքի ուսումնասիրության բնագավառում լեզվական փաստերի վրա հիմնվելը, հանրահայտ ֆրանսիացի գիտնական Կլոդ Լեւի-Ստրոսի խոսքերով, թույլ է տալիս մարդաբանությանը դուրս գալ այն իմացական փակուղուց, որի շրջանակներում նրան տրված են միայն երկու, հավասարապես անպտուղ հնարավորություններ՝ «կամ օրինականացնել վատթարագույն նախապաշարմունքները, կամ առարկայացնել ամենափուչ վերացարկումները»: Նշված բնագավառում պատշաճ գիտական օբյեկտիվությունն ապահովելու համար մարդաբանությունը, Կ. Լեւի-Ստրոսի կարծիքով, լեզվաբանության օժանդակության կարիքն ունի, «քանի որ միայն լեզվի իմացությունն է թույլ տալիս թափանցել տրամաբանական կատեգորիաների եւ բարոյական արժեքների այն համակարգի մեջ, որը տարբերվում է դիտարկողի համանման համակարգից» [7]:

Հայոց լեզուն ընդունակ է ծառայել հայ ազգային մտակեցվածքի բացահայտման խնդրին առավել, քան դա կարող են անել շատ ուրիշ լեզուներ իրենց կրող հանրույթների մտակեցվածքի նկատմամբ: Այս առավելությունը պայմանավորված է հետեւյալ երեք հանգամանքների երջանիկ զուգադիպությամբ. 1) հայոց լեզուն միայն հայկական էթնոսի մայրենի լեզուն է, 2) աշխարհընմբռնման եղանակի համար նշանակալից հասկացություններն այստեղ որպես կանոն արտահայտվում են ինքնածին, ուրիշ լեզուներից չփոխառված բառարմատների միջոցով, 3) հնդեվրոպական լեզուների դասում հայերենը տիպաբանական առումով մեկուսի դիրք է գրավում, չի մտնում ոչ մի լեզվական ընտանիքի կազմի մեջ: Նշված հանգամանքներն իրենց գումարային արդյունքում ինչ-որ չափով թեթեւացնում են լեզվական փաստերից դեպի ուրույն ազգային մտածելակերպի հայտնութ-

6. *Гумбольдт В. Язык и философия культуры. М., 1985, с. 349.*
7. *Леви-Стросс К. Структурная антропология. М., 1983, с. 327*

յունը տանող դժվար ճանապարհը, ավելացնում լեզվական տվյալների վրա հիմնված հայոց մտակեցվածքի վերաբերյալ համապատասխան կռահումների հավաստիությունը:

Լեզվական իրականության տարբեր կառուցվածքային մակարդակների աստիճանակարգում բառը այն առաջին, ամենատարրական լեզվական միավորն է, որից սկսած լեզուն կատարում է մտավոր բովանդակության արտահայտման իր հիմնարար գործառույթը: Ահա թե ինչու ազգային լեզվամտածողության առանձնահատկությունները վերծանելու խնդիրը նպատակահարմար է սկսել հենց բառերից, փորձելով պեղել նրանց նշանակությունները, գտնելու համար դրանցում դրոշմված ուրույն ազգային մտածելակերպը, աշխարհըմբռնման եղանակը:

Տարբեր լեզուներում միեւնույն հասկացությունը, գաղափարն արտահայտող բառերը, նշանակությամբ նույնը լինելով, կարող են զգալիորեն տարբերվել իրենց իմաստով, հանդես գալ այդ լեզուները կրողների գիտակցության մեջ իմաստային տարբեր երանգավորումներով: Ասվածի պատճառներից ամենահավանը պետք է համարել այն, որ յուրաքանչյուր նշանակություն լեզվում տրված է ոչ թե մեկուսի կերպով, այլ որոշակի այլ նշանակությունների հետ շաղկապված, կազմելով սրանց հետ մեկ իմաստային ամբողջություն կամ, մեր կողմից առաջարկված տերմինի՝ միասնական «սեմանտիկ դաշտ»: Այդ դաշտը գոյանում է մեկ կամ մի քանի համասեռ բառարմատներից ածանցված բառերի նշանակությունների հանրագումարից:

Տարբեր լեզուներում նույն գաղափարն արտահայտող լեզվական միավորը հայտնվում է իրենց կազմությամբ եւ սահմանագծերով տարբերվող սեմանտիկ դաշտերի շրջանակում: Հենց այդ սեմանտիկ դաշտերի տարբերությունն է, որ պայմանավորում է նշանակությամբ համարժեք բառերի իմաստային առանձնահատկությունները տարբեր լեզուներում: Որոշակի գաղափարներ արտահայտող բառերի սեմանտիկ դաշտերի համեմատական

վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու այդ առանձնահատկություններն ու սրա հիման վրա նաեւ եզրակացնելու համապատասխան ազգային հանրույթներին հատուկ աշխարհընկալման ու մտածելակերպի բնագծերի մասին [8]:

8. Նկարագրված մեթոդի կիրառման մի քանի նմուշներ տրված են «Իշխանության եւ կարգի նկատմամբ դիրքորոշումները ազգային մտակեցվածքում» մեր հոդվածում, որ համեմատվում են որոշ գաղափարների իմաստային երանգները հայոց եւ ռուսաց լեզվամտածողության մեջ: Տե՛ս «Ինքնություն», պրակ 1, Երեւան, 1995, էջեր 180-184:

ЭДИК КЮРЕГЯН. Социологические вопросы сохранения нации.

Без самопознания трудно продвигаться вперед...
Проблемам самопознания посвящено социологическое обследование, проведенное на основании обобщения 100 экспертных оценок.
Ставилась задача получения усредненного представления интеллигенции РА относительно выживания, развития нации и свершения ее идеалов.
Тот же вопросник предлагается представителям армянской диаспоры. Предполагается, что усредненная экспертная оценка этой части армян, составляющей 2/3 нации, позволит получить более полную картину относительно исследуемой проблемы.

КОРЮН САРИНГУЛЯН. Размышления об идентичности и менталитете нации.

В сознании членов любого этнического коллектива присутствуют определенные стереотипные представления о том, какие именно черты характера, поведения, интеллектуального и морального облика типичны для их коллективного национального Я. Эти стереотипы выполняют главным образом функции психологической защиты и психотерапии и строятся путем гипертрофирования или мифологизации некоторых действительных фактов национальной жизни. Для реалистического постижения национальной идентичности эти стереотипные самооценки являются познавательными помехами, однако их можно и нужно изучать в качестве неких симптомов искомого национального Я. В структуре этого Я менталитет выступает как идейное основание специфических черт характера и психического склада нации в целом. Благодаря своим объективациям в языке и культуре менталитет может фиксироваться и изучаться средствами науки.

Сравнение семантических полей слов, выражающих одно и то же понятие, в разных языках - один из перспективных методов научной реконструкции менталитета соответствующих наций, в том числе менталитета армянского народа.

The authors of the articles in this issue maintain that progress is inconceivable without self-awareness.

E. KOOREGHYAN. Sociological Issues on National self-Awareness.

This work addresses problems researched within Project 1.1, "Armenian psychology, values moral and ethical, assessment of Armenian national consciousness, identity, and character". On the basis of the analysis of the answers to a sociological questionnaire on Armenian national self-awareness; involving 100 expent researchers, it was possible to reveal average Armenian self-awareness.

KORYOON SARINGOOLYAN. On National Identity and Mentality.

The members of any ethnic community possess a certain set of stereotypes which characterize their collective national Self as expressed in their character, behavior, intellect, morality. Stereotypes which serve as instruments for psychological defense and therapy, are created by enhancing and mythologizing some aspects of national life. Though the true understanding of national identity may be overshadowed by this kind of stereotypical self-assessments, nevertheless they are symptomatic of national identity eagerly sought for and ought to be

investigated in this light as well. In the structure of the national Self, mentality is manifested as ideological basis of specific qualities of national character and national mind. Due to its materialization in language and culture, mentality can be identified and studied through research methods. One such method is the comparison of lexico-semantic fields expressing the same concept in different languages.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առանց ինքնաճանաչման դժվար է առաջ գնալ.....4
2. Էդիկ Կյուրեղյան,
Հայապահպանման սոցիոլոգիական հարցեր.....6
3. Կորյուն Սարինգուլյան,
Խոհեր ազգային ինքնության եւ մտակեցվածքի մասին.....15
4. Ամփոփումներ (ռուսերեն եւ անգլերեն).....32